ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի . հեռ. 060285013 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» մարտի 2019 թվական N 26-Ա

ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի, ի կատարումն Կոտայքի մարզպետի 2020 թվականի փետրվարի 26-ի N 64-Ա որոշման 2-րդ կետի, Մայակովսկի համայնքի վարչական տարածքում 2020 թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

որոշում եմ՝

1.Հաստատել Կոտայքի մարզի Մայակովսկի համայնքի վարչական տարածքում 2020 թվականի հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել՝

1) համայնքի հակահեղեղային կառույցների (կառույցի) հաշվառման վերաբերյալ տեղեկություններ՝ համաձայն N 2 հավելվածի.

2) համայնքին սպառնացող պոտենցիալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Մայակովսկու համայնքապետարանի առաջին կարգի մասնագետ Գեղամ Ասատրյանի վրա:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2019 թվական N 27-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի առաջին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով Արա Ավագյանի խնդրանքը, ***որոշում եմ.***

1. Արա Անուշավանի Ավագյանին համասեփականության իրավունքով պատկանող Մայակովսկի համայնք վարչական տարածքում գտնվող 07-043-022-012 կադաստրային ծածկագրով գույքին տրամադրել հասցե՝

Գ. Մայակովսկի , Լյուդվիգ Դուրյան փողոց թիվ 1 հասցե :

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի

2020թ.մարտի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մարտի 2020 թվական N 28-Ա

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48 –րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Մայակովսկի համայնքի ավագանու 2020թվականի հունվարի 15-ի թիվ 05-Ա որոշումը , Մայակովսկի համայնքի բնակիչ Արփիկ Վարդանյանի ֆինանսական օգնության մասին դիմումը, հաշվի առնելով նրա ընտանիքի սոցիալական վիճակը և համայնքի սոցիալական հանձնաժողովի եզրակացությունը, ***որոշում եմ՝***

1. Մայակովսկի համայնքի 2020 թվականի բյուջեի « Սոցիալական օգնություններ » 4729 հոդվածից Արփիկ Վարդանյանին տրամադրել 30 000 / երեսուն հազար/ դրամ դրամական օգնություն:
2. Հանձնարարել հաշվապահ Ա. Հարությունյանին կատարել վճարում :
3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2020թ.մարտի 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«12» մարտի 2020 թվական N 28-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշման և 2015 թվականի հուլիսի 23 N 828-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի պահանջների,

որոշում եմ.

1.Մայակովսկի համայնքի 7-րդ փողոց, թիվ 2/9-1 հասցեի համայնքային սեփականություն համարվող 07-043-0006-0018 կադաստրային ծածկագրով 0.0390 հա բնակավայրերի նշանակության այլ հողամասի գործառնական նշանակությունը համարել փոխված՝ հասարակական կառուցապատման հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով հասարակական կառուցապատում իրականացնելու համար:

2.Սույն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2020թ.մարտի 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«10» մարտի 2020 թվական N 30-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 4-րդ հոդվածի և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 6-ի N 24-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1. .Մայակովսկի համայնքի 2020 թվականի սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկումներ:

2.Հաստատել .Մայակովսկի համայնքի 2020 թվականի սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը՝ համաձայն հավելվածի:

3.Հանրային քննարկումների ընթացքում իրականացվող բաց լսումների անցկացումը հանձնարարել .Մայակովսկի համայնքի ղեկավարին կից «Համայնքի զարգացման հնգամյա ծրագրի և տարեկան բյուջեի կառավարման» խորհրդակցական մարմնի անդամ Աստղիկ Հարությունյանին:

4.Հանձնարարել համայնքապետարանի առաջատար մասնագետ Աստղիկ Հարությունյանին՝ համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել սուբվենցիայի ծրագրերի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկումների հրավերը, ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝ բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղում և այն վայրերում, որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝ առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:

5.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել համայնքապետարանի առաջատար մասնագետ Աստղիկ Հարությունյանին վրա:

6.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Վեներա Փայտյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Գ.Մայակովսկի
2020թ.մարտի 10

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 28 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2020 թվական N 31-Ա

ԱՇԽԱՏԱՎԱՅՐՈՒՄ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 47-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 09.03.2020 թ. ՆԱԹ/04/4450-2020 գրությունը՝ որոշում եմ

1.Համայնքապետարանում (աշխատավայրում) կորոնավիրուսային հիվանդության (COVID-19) տարածումը կանխարգելելու նպատակով ձեռք բերել ախտահանիչ նյութեր և համապատասխան պարագաներ:
2.Ապահովել կոշտ մակերեսների պարբերաբար խոնավ մաքրումը, հաջորդիվ՝ ախտահանումը:
3.Աշխատավայրում՝ տեսանելի վայրերում, ապահովել ձեռքերի ախտահանիչ նյութեր և համապատասխան պարագաներ: Մուտք գործող անձանց ձեռքերը ախտահանիչ նյութերով շփելու համար զգուշացնելու նպատակով մուտքի մոտ սահմանել հերթապահություն:
4.Հնարավորության սահմաններում բացառել սուր շնչառական վարակներին բնորոշ ախտանիշներով աշխատակիցների/անձանց մուտքը:
5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Գ.Մայակովսկի
2020թ.մարտի 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզի Մայակովսկի համայնք, գ. Մայակովսկի. Հեռ 060 86 50 13 E-mail mayakovski-1@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մարտի 2020 թվական N 32-Ա

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԹԻՄ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 47-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2020 թվականի մարտի 17-ի N01/8.2/02014-2020 գրությունը՝ ***որոշում եմ.***

1.Երկրի մակարդակով կորոնավիրուսային վարակի բերովի դեպքով/դեպքերով (COVID-19) պայմանավորված արտակարգ իրավիճակների արձագանքման նպատակով ձևավորել մասնագիտական թիմ հետևյալ կազմով՝
Վահագն Բարսեղյան - թիմի ղեկավար (համայնքի ղեկավար),
Գեղամ Ասատրյան - թիմի ղեկավարի տեղակալ (առաջին կարգի մասնագետ),
Վեներա Փայտյան - թիմի անդամ (աշխատակազմի քարտուղար),
Արուս Ազատյան - թիմի անդամ (երկրորդ կարգի մասնագետ),
Գոհար Միսակյան- թիմի անդամ (առաջատար մասնագետ),
Նունե Խաչատրյան - թիմի անդամ («Մայակովսկու ԱԱՊԿ» ՊՈԱԿ-ի տնօրեն) /համաձայնությամբ/,
Լիլիթ Ղազարյան - թիմի անդամ («Մայակովսկու Հր.Հովհաննիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն) /համաձայնությամբ/:
2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԲԱՐՍԵՂՅԱՆ

2020թ.մարտի 18

Գ.Մայակովսկի